

Մ Ո Ս Թ Ռ Է Ա Լ Ի
Ս. ԳՐԻԳՈՐ ՀՈՒՍԱԿՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՏԱՐԵԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ Տարեկան ծխական ժողովը տեղի ունեցաւ Կիրակի, Փետրուար 10, 1980, յետ միջօրէի ժամը 3.15-ին Եկեղեցւոյս մէջ: Ներկայ էին 334 տրատու անդամներ:

Եկեղեցւոյս հոգեւոր հովիւ եւ նախագահ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէց-եան ժողովին բացումը կատարեց Տէրունական աղօթքով՝ ներկաներու մաս-նակցութեամբ:

Յետ ստուգման օրինաւորութիւնը ծխական ժողովին, համաձայն մեր թե-մին Կանոնագրութեան յօդուած 17-ին, ծխական Խորհուրդոյ առենապետ Պրն. Արթօ Պասմանեան հրաւիրեց ներկաները կատարելու օրուան դիւանի ընտրու-թիւնը:

Դիւանի ՀՆՏՐՈՒԹԻՒՆ. - Զեռնբաց քուէարկութեամբ ժողովը օրուան դիւանի ատենապետ ընտրեց՝ Տոքթ. Յակոբ Խաչիկեանը, իսկ ատենապիր՝ Տիկ. Էմմա Գալուստեան: Դիւանի ատենապետ Տոքթ. Յակոբ Խա-չիկեան շնորհակալութիւն յայտնեց, իրեն հանդէպ ցոյց տրուած վստահու-թեան համար, ապա ձեռնարկեց օրակարգի նիւթերու գործադրութեան:

Յաջորդաբար, Պրն. Ժիրայր Տէրպիշեանի կողմէ առաջարկուեցաւ օրակար-գի 5-րդ եւ 6-րդ յօդուածները տեղափոխել իրարու հետ: Առաջարկը երկ-րորդուելով ընդունուեցաւ ժողովին կողմէ: Տոքթ. Արթօ Տէմիրնեան առա-ջարկեց, որպէսզի օրակարգի թիւ 11 յօդուածը այսինքն՝ թելադրութիւններ եւ զանազանք-խօսուին այս ժողովին մէջ, կատարուելիք ընտրութիւններէն առաջ, որոնք տեղի պիտի ունենան յառաջիկայ Կիրակի 17 Փետրուար 1980 թուականին: Նկատի ունենալով, թէ սոյն առաջարկը այսօրուան օրակարգին մաս կը կազմէ, միաձայնութեամբ ընդունուեցաւ: Օրակարգի նիւթերու փո-փոխութիւնները վերջացած ըլլալով Դիւանի ատենապետ խնդրեց որ ան վաւե-րացուի անդամներուն կողմէ: Օրակարգը վաւերացուեցաւ միաձայնութեամբ:

ՀՆԹԵՐՑՈՒՄ ՆԱԽՈՐԴ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ. - Օրուան ատենապիր Տիկ. Էմմա Գալուստեան կարդաց նախորդ Անդամական ժողովի ատենագրութիւնը: Թելադրուեցաւ որ ժողովին օրինականութիւնը յայտարարուի չովիւին կողմէ, որ նոյն ատեն նախագահն է, փոխան ծխական Խորհուրդի ատենապետին, ինչպէս որ յիշուած էր նախորդ տեղեկատութեան մէջ: Դարձեալ ժողովին կողմէ առնուած որեւէ բանաձեւ, յստակ կերպով պէտք է արձանագրուի տեղեկատութեան մէջ:

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ ԵԻ ՎԱՒԵՐԱՑՈՒՄ ՆԻՒԹԸ. - ԱՐՈՅՑՆԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆՑ. - ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ. - Յետ կարգ մը թելադրութեանց, ժողո-վը վաւերացուց չովիւին տեղեկատութիւնը:

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ. - Նիւթական տեղեկատութեան մէջ, անդամներուն կողմէ մատնանշուեցաւ, Եկեղեցւոյս տարեկան տուրքի յատկացման մասին ի Առաջնորդարան, թէ ի՞նչ ձեւով կը կիրարկուին: Գանձապահ Պրն. Միսաք Կուտսուզեան -այժմ հրաժարած- բա-ցարութիւններ տուաւ տուրքերու վճարման մասին, որոնք կը սահմանուին թեմական Պատգամաւորական ժողովին կողմէ, ոչ թէ ծխական ժողովներու կողմէ: Տ. Պարէտ Վրդ. Երէցեան տուաւ աւելի լուսաբանութիւններ եւ մանրամասնութիւններ նոյն նիւթին շուրջ:

Ծխական Խորհուրդոյ եւ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ. - Ժողովը գրադեցաւ ծխական Խորհուրդոյ եւ Ենթակայ յանձնա-իումբերու տարեկան տեղեկատութիւններով եւ զանոնք վաւերացուց յետ գնահատական արտայատութիւններու, մասնաւորաբար Եկեղեցասէր Տիկնանց Յանձնախումբի գործունէութիւնները դիմաւորուեցան մեծ գնահատանքով:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՀՈՐԻՉ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՑԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵԽԱԳՐՈՒԹԻՒՆ Շար. 2

ՆԻՒԹԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ.- Կարգ մը թելադրութեանց եւ թէր ու դէմ կարծիքներու փոխանակումներէ ետք, ժողովը միաձայնութեամբ վաւերացուց ծխական Խորհուրդոյ եւ իրեն ենթակայ յանձնախումբերու նիւթական տեղեկատութիւնները:

ԱՆԴԱՄԱՏՈՒՐՔԵՐՈՒԻ ՅԱԽԵԼՈՒՄ.- Ժողովը զբաղուեցաւ օրակարգի 5-րդ հարցով, որ առաջարկուած էր ծխական Խորհուրդին կողմէ, ծխական ժողովին ուշադրութեան յանձնել անդամատուրքերու բարձրացման հարցը ըստ հետեւեալին. 25 տոլար անդամատուրքը բարձրացնել 30-ի եւ 15-ի 20-ի: Յետ հարցին քննութեան, Պրն. Աւետիս ծիհանեան առաջարկեց որ 25 տոլարը բարձրացուի Յ0-ի եւ սակայն, տարեցներու եւ երիտասարդներու համար սահմանուած 15 տոլարի գումարը մնայ նոյնութեամբ: Այս առաջարկը երկրորդուելէ յետոյ, ընդունուեցաւ անդամներու մեծամասնութեան ձայնով:

1980 ՏԱՐՈՒԱՆ ՆԱԽԱՀԱՇԻԻ ՎԱԽԵՐԱՑՈՒՄ.- Պրն. Քերովքէ Պտուկեան առաջարկեց որպէսզի եկեղեցին ունենայ 2000 տոլարի յատկացում մը ընկերային սպասարկութեան համար: Տոքթ. Արթօ Տէմիրծեան, նոյն հարցին շուրջ, առաջարկեց որ զանց առնուի նման յատկացում մը, տրուած ըլլալով որ գաղութին մէջ տարբեր կազմակերպութիւններ արդէն կը զբաղուին նոյն հարցով: Յետ կարծիքներու փոխանակման, ժողովը մեծամասնութեամբ ընդունեց 2000 տոլարի յատկացում մը կատարել ընկերային օժանդակութեանց ծառայութեան համար: Պրն. Անդրանիկ Զատրճեանի առաջարկով նախահաշիւին վրայ աւելցուեցաւ 2000 տոլարի վերոյիշեալ յատկացումը: Ապա մեծամասնութեան ձայներով վաւերացուեցաւ 1980 տարեշորջանի նախահաշիւը:

ՎԱԽԵՐԱՑՈՒՄ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱԽԵՆԱԽՈՒՄԾԻ ԿՈՂՄԷ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ԹԵԿՆԱՃՈՒԽԵՐՈՒ ՑԱՆԿԵՐՈՒԻՆ.- Դիւանի ատենապետ Տոքթ. Յաչիկեան կարդաց Ընտրողական Յանձնախումբի կողմէ պատրաստուած թեկնածուներու անունները: ծխական Խորհուրդոյ թեկնածուներու մէջ գտնուող Պ.Պ. Գէորգ Փելթէքեան եւ Առաքել Առաքելեան ներկայացուցին իրենց հրաժարականները որպէս թեկնածուներ: Ապա, Տոքթ. Յ. Խաչիկեան հրաւիրեց Ընտրողական Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Արթօ Տէմիրծեանը, որպէսզի տայ իր տեղեկատուութիւնը տարուած աշխատանքներու մասին: Տոքթ. Ա. Տէմիրծեան ժողովին ուշադրութեան յանձնեց տարուած աշխատանքներուն մասին, ընտրութեանց թուականին, ժամին եւ կիրարկուելիք մեթուներուն մասին: Յաջորդաբար Պրն. Արամ Մելիքեան առաջարկեց որ թեկնածուներու ցանկերը փակուած համարուին: Պրն. Երուանդ Շիշմանեանի կողմէ երկրորդուելով այս առաջարկը, ժողովին կողմէ մեծամասնութեամբ ընդունուեցաւ եւ վաւերացուեցաւ թեկնածուներու ցանկերը ծխական Խորհուրդոյ, Ընտրողական Յանձնախումբի եւ Հաշուեքնիչ Յանձնախումբի:

ՕՐԱԿԱՐԳԻ 8, 9 եւ 10-րդ նիւթեր՝ ԸՆՏՐՈՒԹԻՒԽԵՐՈՒ.- Դիւանի ատենապետը ժողովին ուշադրութեան յանձնեց, որ ընտրութիւնները տեղի պիտի ունենան յառաջիկայ Կիրակի, 17 Փետրուար 1980, կէսօրէ ետք, ժամը 1-6 ի միջեւ եկեղեցւոյ մէջ; համաձայն ծխական Խորհուրդոյ պաշտօնական հրաւէրին:

ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒԽԵՐ ԵՒ ԶԱՆԱԶԱՆՔ.- Նկատի ունենալով այս տարուան ընդհանուր ժողովի հրաւէրներուն յապաղումը Գանատական Թղթատարութեան կաղացումին պատճառով, ժողովը թելադրեց ծխական Խորհուրդին, որ յառաջիկային հրաւէրները ուղարկուին կարելի եղածին չափ կանուխէն:

Յաջորդաբար ժողովը զբաղուեցաւ յառաջիկայ տարուան ծխական ժողովի թուականին մասին, թելադրելով որ ժողովին թուականը կարելի եղածին չափով նախապէս որոշել:

ՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒԽԵՐ.- Օրակարգի հարցերը վերջացած ըլլալով իքացառեալ ընտրութիւններէն, Դիւանի ատենապետը հրաւիշեց չայր Սուրբը որ իր խօսքը եւ օրհնութիւնները տայ: Տ. Պարէտ Վրդ. յայտարարեց որ ժողովը առկան կը մնայ մինչեւ յաջորդ Կիրակի: Ապա տալով

Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ Շար. 3

իր օրինութիւնները եւ պատգամը ժողովը վերջ գտաւ երեկոյեան ժամը 6.30-ին:

ՀՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.- ծխական Խորհուրդոյ, Ընտրողական Յանձնախումբի ինչպէս նաեւ Հաշուեքննիչ մարմնի ընտրութիւնները տեղի ունեցան նախապէս որոշուածին համաձայն յաջորդ Կիրակի օր, Փետրուարի 17-ին, Եկեղեցւոյ Մարի Մանուկեան սրահին մէջ ամենայն կանոնաւորութեամբ եւ կարգապահութեամբ ժամը 1-6 ի միջեւ: Ընտրութիւններուն մասնակցեցան Եկեղեցւոյ 869 տրատու անդամները: Ժամը երեկոյեան 6-էն ետք, Ընտրողական Յանձնախումբի եւ Հաշուեքքննիչ Մարմնի նախորդ տարուան ընտրուած անդամները Եկեղեցւոյ Վաչէ Յովսէփեան Պահլիճին մէջ առանձնանալով կատարեցին քուէններու համրելու աշխատութիւնը եւ զայն վերջացուցին գիշերուան ժամը 12-ին եւ պատրաստեցին տեղեկատուութիւն մը ցոյց տալով ընտրութեանց արդիւնքները ըստ հետեւեալին.

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՈՅ ՀՆՏՐՈՒԱԾ ԱՆԴԱՄՆԵՐ.-

1.- Տոքթ. Յակոբ Խաչիկեան	823	քուէով ընտրուած
2.- Տոքթ. Արթօ Տէմիրծեան	589	"
3.- Պրն. Արթօ Պասմանեան	522	"
4.- Տոքթ. Յարութիւն Արզումանեան	497	"
5.- Պրն. Ժիրայր Կազէրեան	367	պահեստի
6.- Տիկ. Արտա Գույումծեան	348	"

ՀՆՏՐՈՂԱԿԱՆ ՅԱՆՉԱԽՈՒՄԲԻ ՀՆՏՐՈՒԱԾ ԱՆԴԱՄՆԵՐ.-

1.- Տոքթ. Յովհաննէս Պալապանեան	818	ընտրուած
2.- Պրն. Ժիրայր Այվատեան	764	"
3.- Պրն. Համբարձում Կէօչէրեան	735	"
4.- Պրն. Վահէ Քէթլի	520	"
5.- Տոքթ. Հրայր Տէր Գէորգեան	491	"
6.- Պրն. Քերովքէ Պտուկեան	383	պահեստի
7.- Պրն. Մուրատ Թագւորեան	353	"
8.- Պրն. Հրաչ Թորիկեան	45	"
9.- Տիկ. Անահիտ Գալայծեան	31	"
10.- Պրն. Հրատ Մարաֆեան	6	"

ՀԱՇՈՒՔՆԻՉ ՄԱՐՄԻ ՀՆՏՐՈՒԱԾ ԱՆԴԱՄՆԵՐ.-

1.- Պրն. Գէորգ Մանուկեան	768	ընտրուած
2.- Պրն. Անդրանիկ Զատրծեան	488	"
3.- Պրն. Վահագն Արապեան	482	"
4.- Պրն. Արտէն Տէրվիշեան	358	պահեստի
5.- Պրն. Արթօ Քէփէքնի	354	"
6.- Պրն. Իվան Բրուտեան	47	"

ԾԽԱԿԱՆ ՅԱՆՉԱԽՈՒՄԲԻ ՊԱՐԵՐ

ՊԱՐԵՐ ՎՐԴ. ԵՐԵՑԵԱՆ
ՀՈԳԵԵԿՈՐ ՀՈՎԻՒ ԵՎ ՆԱԽԱՊԱԿ

ՀԱՇՈՒՔՆԻՉ ՄԱՐՄԻ ՊԱՐԵՐ

ՏՈՔԹ. ՅԱԿՈԲ ԽԱՉԻԿԵԱՆ
ԴԻԼԱՆԻ ԱՄԵՆԱՊԵՏ

ՀԱՇՈՒՔՆԻՉ ՄԱՐՄԻ ՊԱՐԵՐ
ՏԻԿ. ԷՄՄԱ ԳԱԼՅՈՒՏԵԱՆ
ԴԻԼԱՆԻ ԱՄԵՆԱՊԵՏ